ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Փանիկի համայնք, 2-րդ փողոց թիվ 43
հեռ. 093 353638

06.02.2017թ.

N_19

Հ Հ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու հերթական նիստի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 27-ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 6-ն որոշումը, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 7-Ն որոշումը, « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 34-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 8-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 5-Ն որոշումը:

ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՄԱԿԵՅԱՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 1204-17
06. 02. 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 5

<<19>> հունվարի 2017 թվական գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները՝ համաձայն հավելվածի:

ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
19-Ի ԹԻՎ 5-Ա ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ համայնքի 2017 թվականի բյուջեի եկամուտների եռամսյակային համամասնությունները

Հազար դրամ

Հ/Հ	Եկամտատեսակները	2017թ.			
		1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.
1.	Հողի հարկ	550	1600	3200	4590,2
2.	Գույքահարկ	603,2	2006,5	3509,7	6722,1
3.	Տեղական տուրք	206,0	412,0	618,0	824,0
4.	Հողի վարձավճար	100	200	1000	1697,0
6.	**Ընդամենը սեփական եկամուտներ**	**1459,2**	**4218,5**	**8327,7**	**13833,3**
7.	Դոտացիա	14104,0	28208,0	42312,0	56416,0
	Ընդամենը եկամուտներ	15563,2	32426,5	50639,7	70249,3
8	Տարեվերջի ազատ մնացորդ	5988,0	5988,0	5988,0	5988,0
	Ընդամենը	21551,2	38414,5	56627,7	76237,3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ ԸՍՏ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Հազար դրամ

բաժին	խումբ	դաս	Անվանումը	2017			
				1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.
01	0	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ				
01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	10968	16968	22698	30708
01	3	3	Ընդհանուր բնույթի ծառայություններ	270	420	550	670
01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/	0	0	0	350
04	2	1	Գյուղատնտեսություն	90	490	990	990
04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	1200	2000	2700	3200
05	1	1	Աղբահանում	300	800	1000	1200
06	3	1	Ջրամատակարարում	760	1520	2200	3050
06	4	1	Փողոցների լուսավորում	500	1050	1400	1800
08	1	1	Հանգիստ և սպորտի ծառայություն	150	400	800	900
08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	600	900	1400	1800
09	1	1	Նախադպրոցական կրթություն	3300	7500	12300	16100
09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն	0	0	250	250
09	4	1	Բարձրագույն կրթություն	200	400	700	800
09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	2200	4100	6500	8100
09	6	1	Կրթությանը տրամադրվող օժ. ծառայությ.	100	100	300	300
10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ	400	800	1200	1500
11	1	2	Պահուստային ֆոնդ	513,2	966,5	1639,7	4519,3
			ԸՆԴԱՄԵՆԸ	21551,2	38414,5	56627,7	76237,3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ, ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Հազար դրամ

Հոդվածների անվանումը	հոդված	2017			
		1-ին եռ	2-րդ եռ	3-րդ եռ	4-րդ եռ
Աշխատավարձ	4111	4760,0	9520,0	14200,0	18700,0
Պարգևատրումներ	4112	0	0	0	1500
Էներգետիկ ծառայություններ	4212	660,0	1050,0	1300,0	1900,0
Կոմունալ ծառայություններ	4213	550,0	1150,0	1450,0	1900,0
Կապի ծառայություն	4214	120,0	280,0	400,0	500,0
Ապահովագրական ծախսեր	4215	40	40	60	60
Գործուղման ծախսեր	4221	160,0	320,0	450,0	700,0
Համակարգչային ծառայություններ	4232	110,0	220,0	250,0	300,0
Տեղեկատվական ծառայություններ	4234	100,0	100,0	200,0	250,0
Կառավարչական ծախսեր	4235	90,0	140,0	140,0	140,0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	620,0	1050,0	1950,0	2300,0
Մասնագիտական ծառայություններ	4241	160,0	250,0	350,0	470,0
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	4251	200,0	1400,0	2500,0	3550,0
Մեքենաների և սարքավորումների ընթ. նորոգում	4252	200,0	400,0	600,0	950,0
Գրասենյակային հագուստներ և նյութեր	4261	50,0	200,0	300,0	400,0
Գյուղատնտեսական ապրանքներ	4262	0,0	400,0	850,0	850,0
Տրանսպորտային նյութեր	4264	500,0	900,0	1400,0	2000,0
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	630,0	1240,0	1650,0	2160,0
Սուբսիդիա	4511	5500,0	11600,0	18800,0	24200,0
Այլ նպաստներ բյուջեից	4729	600,0	1200,0	2150,0	2550,0
Նվիրատվություն	4819	0	0	0	350
Պահուստային միջոցներ	4891	513,2	966,5	1639,7	4519,3
Շենքերի և կառույցների կապիտալ վերանորոգում	5113	1888,0	1888,0	1888,0	1888,0
Տրանսպորտային սարքավորումներ	5121	3500,0	3500,0	3500,0	3500,0
Վարչական սարքավորումներ	5122	600	600	600	600
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**21551,2**	**38414,5**	**56627,7**	**76237,3**

ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 6-Ն

<< 19 >> Հունվարի 2017 թվական գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 27-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ 19-րդ և 20-րդ կետերի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ հոդվածների և 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի վարչական տարածքում սահմանել 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը 0,5 գործակցի կիրառմամբ՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 2-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 27-Ն որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 20-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐՄԵՆ ԱՐԵՎԻԿՅԱՆ՝ կողմ .....
ԳՈՒՐԳԵՆ ԱՐԵՎԻԿՅԱՆ՝ կողմ .....
ԱՄԲԱԿՈՒՄ ՍԵՐՈԲՅԱՆ՝ կողմ .....
ՄԱՆՎԵԼ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ՝ կողմ .....
ԴԱՎԻԹ ՄԱՆԱՍՅԱՆ՝ կողմ .....
ՄԻՀՐԱՆ ԲՈՅԱՋՅԱՆ՝ կողմ .....
ՀԱՄԱԶԱՍՊ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ կողմ .....
ՎԱՀԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ կողմ .....

ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

<<19>> Հունվարի 2016 թվական
գ. Փանիկ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Փանիկ համայնքի

ավագանու 2017 թվականի հունվարի 19-ի

թիվ 2-Ն որոշման

Տեղական տուրքերի դրույքաչափեր

1. Հայաստանի Հանրապետության Փանիկ համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,

վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000/ երկու հարյուր հազար/ դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 /երեսուն հազար/ դրամ.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 10000 /տաս հազար/ դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 3000 /երեք հազար/ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 /վեց հազար հինգ հարյուր/ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /տաս հազար/ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500 /տասներկու հազար հինգ հարյուր/ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22500 /քսաներկու հազար հինգ հարյուր/ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 3000 /երեք հազար/ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 /վեց հազար հինգ հարյուր/ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /տաս հազար/ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500 /տասներկու հազար հինգ հարյուր/ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22500 /քսաներկու հազար հինգ հարյուր/ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում սառնորի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազարից հազար դրամ,

դ. խաղատների համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 75000 / յոթանասունհինգ հազար/ դրամ.

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 /տաս հազար/ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 500 /հինգ հարյուր/ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 /չորս հազար/ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 / յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12500 /տասներկու հազար հինգ հարյուր/ դրամ.

13) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

14) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 / մեկ հազար յոթ հարյուր հիսուն/ դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750 /յոթ հարյուր հիսուն/ դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 200 /երկու հարյուր/ դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 100 /մեկ հարյուր/ դրամ.

15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում

օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ.

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 250000 / երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1250000 /մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3500000 /երեք միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 /հինգ միլիոն/ դրամ:

ետով սահմանված դրույքաչափը՝ մինչև 10.0 անգամ ավելի:

Տեղական վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության Փանիկ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 3000 / երեք հազար/ դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000 /հինգ հազար/ դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000 /հինգ հազար/ դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 30000 / երեսուն հազար/ դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար՝ 0 /զրո/ դրամ.

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

9) կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 /մեկ հազար/

10) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 0 /զրո/ դրամ.

11) ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 0 /զրո/ դրամ.

12) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 0 /զրո/ դրամ.

13) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 /երկու հազար/ դրամ.

14) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 /երկու հազար/ դրամ.

15) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավազանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 0 /զրո/ դրամ.

16) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 0 /զրո/ դրամ.

17) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար փոխհատուցման վճար՝ 0 /զրո/ դրամ. .

18) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ փոխհատուցման վճար:

ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՄԱԿԵՅԱՆ

19 հունվարի 2017 թվական

Գ.Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 7-Ն

<<19>> հունվարի 2017 թվական գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Արմեն Արևիկյան՝ կողմ .....

Գուրգեն Արևիկյան՝ կողմ .....

Մհերան Բոյաջյան՝ կողմ .....

Դավիթ Մանասյան՝ կողմ .....

Վահան Նազարյան՝ կողմ .....

Համազասպ Սալնազարյան՝ կողմ .....

Մանվել Սալնազարյան՝ կողմ .....

Ամբակում Սերոբյան՝ կողմ .....

ՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

19-ը հունվարի 2017 թվական
գ. Փանիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՓԱՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19 -Ի
ԹԻՎ 7-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՎ

Հազար դրամ

հ/հ	Եկամտատեսակները	2016թ.				2015թ.				համեմատ. 2016/2015 %
		Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատարման տոկոս	Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատարման տոկոս	
1.	Հողի հարկ	4550,5	4550,5	4558,6	100,17	4496,0	4496,0	4509,2	100,3	
2.	Գույքահարկ	5829,3	5829,3	5830,8	100,0	4390,1	4390,1	4459,6	101,6	
3.	Տեղական տուրք	660,0	660,0	673,1	102,0	698,0	698,0	702,6	100,7	
4.	Հողի վարձավճար	1693,0	1693,0	1695,0	100,1	1693,0	1693,0	1693,6	100,0	
5.	Այլ մուտքեր /տեղական վճար/	0,0	0	5,0		0	0	0		
6.	**Ընդամենը սեփական եկամուտներ**	***12732,8***	***12732,8***	***12762,5***	***100,2***	***11277,1***	***11277,1***	***11365,0***	***100,8***	
7.	Դոտացիա	56416,0	56416,0	56416,0	100,0	53639,0	53639,0	53639,0	100,0	
8.	Պետության կողմից տրամադրվող այլ դոտացիա	0,0	379,4	379,4	100,0	1137.2	1380.6	1380.6	100.0	
9.	Ընթացիկ դրամաշնորհ /սուբվենցիա/	0	0	0		0	4000.0	4000.0	100.0	
12.	Պետ. բյուջեից Կապիտալ ծախս	0	0	0		0	400.0	400.0	100.0	
13.	ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ	**69148,8**	**69528,2**	**69557,9**	**100,0**	**66053,3**	**70696,7**	**70784,6**	100.1	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2016թ-ԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Հազար դրամ

բաժին	խումբ	դաս	Անվանումը	2016				2015			
				Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատ. %	Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատ. %
01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	28255,6	30525,0	28788,2	94,3	29620.0	31270.0	28249.1	90.3
01	3	3	Ընդհանուր բնույթի ծառայություններ	1270,0	870,0	591,7	68.0	500.0	580.0	494.9	85.3
01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/	350,0	350,0	232,0	66.3	332.0	332.0	332.0	100.0
04	2	1	Գյուղատնտեսություն	990,0	1427,0	1102,0	77.2	930.0	1130.0	1063.4	94.1
04	2	4	Ոռոգում	0	420.0	420.0	100.0	0	0	0	0
04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	3900,0	2500,0	2495,0	99.8	1900.0	2700.0	2444.5	90.5
04	9	1	Տնտեսական հարաբերություններ/այլ դասերին չպատկանող/	0	0	-949,7		0	0	-172.6	
05	1	1	Աղբահանում	1000,0	1120,0	1118,5	99.9	1000.0	1000.0	983.1	98.3
06	3	1	Ջրամատակարարում	3050,0	2850,0	2821,5	99.0	800.0	800.0	800.0	100.0
06	4	1	Փողոցների լուսավորում	1100,0	2145,0	2044,1	95.3	800.0	1100.0	1083.0	98.5
08	1	1	Հանգիստ և սպորտի ծառայություն	900,0	503,0	338,0	67.2	900.0	900.0	860.0	95.5
08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	2000,0	2097,0	2095,0	99.9	1400.0	2100.0	1797.5	85.6
09	1	1	Նախադպրոցական կրթություն	16000,0	16000,0	15800,0	98.7	14150.0	14450.0	14450.0	100.0
09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն	250,0	250,0	250,0	100.0	250.0	250.0	250.0	100.0
09	4	1	Բարձրագույն կրթություն	800,0	760,0	760,0	100.0	600.0	900.0	860.0	95.5
09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	7900,0	7900,0	7900,0	100.0	7809.0	8209.0	8209.0	100.0
09	6	1	Կրթությանը տրամադրվող օժ. ծառ.	300,0	300,0	300,0	100.0	400.0	400.0	290.0	72.5
10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ	1800,0	2450,0	2449,0	99.9	1800.0	2575.0	2525.0	98.1
10	9	2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժտված ծառայություններ	0	0	0		0	4000.0	4000.0	100.0

			(այլ դասերին չպատկանող)								
11	1	2	Պահուստային ֆոնդ	4268,8	2046,8	0		5582.3	720.7	0	
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	74134.4	74513.8	68555.4	92.0	68773.3	73416.7	68518.9	93.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ՝ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ, ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Հազար դրամ

Հոդվածների անվանումը	հոդված	2016				2015			
		Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատ. %	Նախատեսված	Ճշտված	Փաստացի կատարված	Կատ. %
Աշխատավարձ	4111	18450.0	18700.0	18617.5	99.5	18450,0	18650,0	18513,9	99,3
Պարգևատրումներ	4112	1500.0	1500.0	1351.5	90.1	1500,0	1600,0	1537,4	96,1
Էներգետիկ ծառայություններ	4212	1900.0	2129.4	1763.7	82.8	1100,0	1600,0	1260,5	78,8
Կոմունալ ծառայություններ	4213	1850.0	1800.0	1498.5	83.2	2100,0	2100,0	1218,1	58,0
Կապի ծառայություն	4214	600.0	600.0	570.6	95.1	700,0	700,0	630,2	90,0
Ապահովագրական ծախսեր	4215	60.0	60.0	36.7	61.2	60,0	60,0	30,9	51,5
Գործուղման ծախսեր	4221	600.0	500.0	300.0	60.0	700,0	600,0	408,0	68,0
Համակարգչային ծառայություններ	4232	450.0	450.0	163.2	36.2	340,0	375,0	201,4	53,7
Տեղեկատվական ծառայություններ	4234	250.0	250.0	239.2	95.7	280,0	208,0	204,9	98,5
Կառավարչական ծախսեր	4235	740.0	190.0	62.5	32.9	130,0	135,0	53,0	39,3
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	2500.0	2390.0	2353.0	98.4	2020,0	2570,0	2067,9	80,5
Մասնագիտական ծառայություններ	4241	470.0	570.0	288.9	50.7	150,0	465,0	367,9	79,1
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	4251	2750.0	3134.1	3132.4	99.9	2500,0	3100,0	2692,2	86,8
Մեքենաների և սարքավորումների ընթ. նորոգում	4252	950.0	900.0	900.0	100.0	1000,0	1200,0	1200,0	100,0
Գրասենյակային հագուստներ և նյութեր	4261	400.0	400.0	330.0	82.5	600,0	546,0	544,0	99,6
Գյուղատնտեսական ապրանքներ	4262	850.0	970.0	926.0	95.4	900,0	895,0	892.9	100,0
Տրանսպորտային նյութեր	4264	2000.0	2490.0	2350.9	94.4	2000,0	2400,0	2395,4	99,8
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1460.0	2117.9	2055.9	97.1	1000,0	1654,0	1654,0	100,0
Սուբսիդիա	4511	23900.0	23900.0	23700.0	99.1	21959,0	22659,0	22659,0	100,0
Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	0	0	0		0	0	0	

Այլ նպաստներ բյուջեից	4729	2850.0	3880.0	3879.0	99.9	2650,0	7725,0	7635,0	100,0
Նվիրատվություն	4819	350.0	350.0	232.0	66.3	332,0	332,0	332,0	100,0
Այլ հարկեր	4822	0	0	0		0	2,0	2,0	100,0
Պահուստային միջոցներ	4891	4268.8	2046.8	0		5582,3	720,7	0	
ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ		**69148.8**	**69528.2**	**64949.6**	93.4	66053,3	70296,7	66500.6	94,6
Շենքերի և կառույցների կապիտալ վերանորոգում	5113	4085.6	4085.6	3771.6	92.3	1800,0	2000,0	1490,9	74,5
Վարչական սարքավորումներ	5122	900.0	900.0	783.8	87.1	920,0	820,0	400,0	48,8
Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	0	0	0		0	300,0	300,0	100,0
ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ		**4985.6**	**4985.6**	**4555.4**	**91.3**	**2720,0**	**3120,0**	2190,9	**70,2**
Հողի իրացումից մուտքեր	8411	0	0	-949.6		0	0	-172.6	
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**74134.4**	**74513.8**	**68555.4**	**92.0**	**68773,3**	**73416,0**	**68518.9**	**93,3**

ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 8-Ն

<< 19 >> Հունվարի 2017 թվական գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 4-րդ մասի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկ համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 7-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 34-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.Եկամտային մաս

1) Որոշման 2-րդ տողում նշված «Գույքահարկ փոխադրամիջոցների համար» տողի <<6715,3>> թիվը փոխարինել <<6722,1>> թվով:

2) Որոշման 3.1 տողում նշված «Հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար» տողի <<320,0>> թիվը փոխարինել <<400,0>> թվով:

3) Որոշման 3.2 տողում նշված «Ծխախոտի և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար» տողի <<592,8>> թիվը փոխարինել <<424,0>> թվով:

4) «Ընդամենը եկամուտներ» տողի <<70331,3>> թիվը փոխարինել <<70249,3>> թվով:

2.Տարեսկզբի ազատ մնացորդ

1) Համայնքի 2017 թվականի բյուջեի միջոցների տարեսկզբի մնացորդը լրացնել «5988,0» թվով, այդ թվում՝
   ա.վարչական մասի մնացորդը լրացնել «4608,1» թվով,
   բ) ֆոնդային մասի մնացորդը՝ «1379,9» թվով
   գ) 2017 թվականի համայնքի բյուջեի վարչական մասի 4608,1 հազար դրամ մնացորդը ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս
   դ) ֆոնդային բյուջեն լրացնել «5988,0» թվով:

3.Ծախսային մաս

1) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) ծրագրի և տնտեսագիտական դասակարգման (պահուստային միջոցներ) 4891 հոդվածի <<4601,3>> թիվը փոխարինել <<4519,3>> թվով:

2) Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «Ընդամենը վարչական ծախսեր» տողի <<70331,3>> թիվը փոխարինել <<70249,3>> թվով.

3) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 (օրենսդիր և գործադիր մարմիններ) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) 5113 հոդվածի <<0.0>> թիվը փոխարինել <<888,0>> թվով:

4) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (Տրանսպորտային սարքավորումներ) 5121 հոդվածի <<0.0>> թիվը փոխարինել <<3500.0>> թվով:

5) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 1, դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (Վարչական սարքավորումներ) 5122 հոդվածի <<0.0>> թիվը փոխարինել <<600.0>> թվով:

6) Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 (Ճանապարհային տրանսպորտ) ծրագրի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) 5113 հոդվածի <<0.0>> թիվը փոխարինել <<1000.0>> թվով:

7) Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «Ընդամենը ֆոնդային ծախսեր» տողի <<0.0>> թիվը փոխարինել <<5988,0>> թվով

8) Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «Ընդամենը ծախսեր» տողի «Ընդամենը» սյունակի <<70331,3>> թիվը փոխարինել <<76237,3>> թվով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Արմեն Արևիկյան՝	կողմ	.....
Գուրգեն Արևիկյան՝	կողմ	.....
Միհրան Բոյաջյան՝	կողմ	.....
Դավիթ Մանասյան՝	կողմ	.....
Վահան Նազարյան՝	կողմ	.....
Համազասպ Սալնազարյան՝	կողմ	.....
Մանվել Սալնազարյան՝	կողմ	.....
Ամբակում Սերոբյան՝	կողմ	.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

«19» Հունվարի 2017 թվական
գ. Փանիկ